

Արձանագրություն №8/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. փետրվարի 13-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 76-ը (յոթանասունվեցը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ ԳԽ մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ.Վ. Ներկարարյան):
2. ԵՊՀ գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Ս. Հովսեփյան):
3. Հաղորդում ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյան):
4. Հաղորդում ԵՊՀ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-դեկտեմբեր) մասին (զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան):
5. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԵՊՀ կարծիքի և առաջարկությունների քննարկում (զեկ.՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան):
6. Ֆինանսական վերլուծությունների վարչության կանոնադրության հաստատում (զեկ.՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչ. պետ Ա.Ա. Թադևոսյան):
7. Պետության կողմից տրամադրվող ԵՊՀ բազային ֆինանսավորման հայտերի երաշխավորության մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Հ. Բարխուդարյան):

8. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ.Գ. Ժամհարյան):
9. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին (զեկ.՝ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան):
10. ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Գ. Անանյանի անվան մուլտիմեդիա լաբորատորիայի վերակազմավորման մասին (զեկ.՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն.Ն. Մարտիրոսյան):

Ընթացիկ հարցեր

11.1. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին:

11.2. ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի սրահը «Հարություն Շմավոնյան սրահ» անվանակոչելու մասին:

11.3. ԵՊՀ արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանի «Իսլամագիտություն» աշխատանքի առաջին հատորը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

11.4. «Հայաստանի Հանրապետության Էկոլոգիական իրավունք» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.թ., պրոֆեսոր Ա. Իսկոյան, ի.գ.թ. Օ. Գեղամյան, ի.գ.թ. Հ. Գրիգորյան) որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

11.5. «Եվրասիական ինտեգրում. գաղափարներ, խնդիրներ, գործընթաց և հեռանկարներ» ռուսերեն աշխատանքի 2-րդ լրամշակված տարբերակը (համահեղ. Վ. Լեպեխին, Ա.Սաֆարյան, Ս. Բելյակով, Վ. Բելսկի, Ա. Թավադյան) որպես ուսումնական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու մասին:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** - Դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	ä³ääÛ³Ý ì³ñ¹áõÑÇ éám»ñiÇ	ÁÝ¹Ñ³Ýáõñ Ñá. »μ³ÝáõÃÛ³Ý ³Ûμ. ¹áó»Ýi
2.	Î³ñ³á»iÛ³Ý éáõμ»Ý Î³éÉ»ÝÇ	³ñ³μ³. Ç¹áõ-ÃÛ³Ý ³Ûμ. ¹áó»Ýi

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	¶³ñ»Û³Ý ¶¹Ñ³ñ è³½ÛÇİÇ	é»· ÇáÝ³É »ñİñ³μ³Ý. " ù· i³İ³ñ Ñ³Ý³ÍáÝ»ñÇ Ñ»i³Éáõ½Û³Ý ³Ûμ. ³èÇèi»Ýi
2.	³¹ÁÛ³Ý iÇ· ñ³Ý ä»iñáèÇ	è»ñiÇèÇ ³Ûμ. ³èÇèi»Ýi
3.	Ðáíè»÷Û³Ý È· áÝ è³Ñ³İÇ	ù³Õ³ù³İ³Ý ÇÝèiÇ¹áõiÝ»ñÇ " · áñÍÁÝÃ³óÝ»ñÇ ³Ûμ. ³èÇèi»Ýi
4.	Ø¹ñiáÛ³Ý Ð³Û¹áõÑÇ ì³ñ¹. »èÇ	ù³Õ³ù³İ³Ý ÇÝèiÇ¹áõiÝ»ñÇ " · áñÍÁÝÃ³óÝ»ñÇ ³Ûμ. ³èÇèi»Ýi

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Զաքարյան Սեյրան (նախագահ)
2. Մանուկյան Սարգիս
3. Սարգսյան Էլիմիրա

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 76 անդամներից 74-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ս.Զաքարյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	ä³ääÛ³Ý ì³ñ¹áõÑÇ éám»ñiÇ	67	4	3

2.	ԻՅճՁ»՝ՍՅՄ ճձձՄ»Մ ԻՅԷ»ՄՇ	66	5	3
----	-------------------------	----	---	---

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	ՊՅճ»ՍՅՄ ՊճՆՅճ ճՅՅՅՍՇԻՇ	71	3	0
2.	ՅճՍՍՅՄ իՇ. ճՅՄ ճ»ճճճՇ	72	2	0
3.	Ծճճ»÷ՍՅՄ ԷճճՅճՅՍՇ	70	4	0
4.	ՓճճճՍՅՄ ԾՅՍՍճճՅճ իՅճճ. »ճՇ	70	4	0

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի, դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին.- ԵՊՀ գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

Որոշեցին.- հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը :

3.Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին: Ռեկտորի ժ/պ Գ.Գևորգյանը նշեց, որ ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2018/19 ուստարում նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ զեկույցը հրատարակվել և ներկայացվել է գիտական խորհրդի անդամներին՝ կոչ անելով ընդունել այն ի գիտություն և ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ընդգծելով, որ ռազմավարական պլանով նախատեսված գործողությունների մասով չկատարված և գերակատարված կետեր կան:

Որոշեցին.- ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին ընդունել ի գիտություն:

4.Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-դեկտեմբեր) մասին: Գլխավոր հաշվապահ Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ԵՊՀ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի տարեկան կատարողականը պրոֆիցիտային է: Տեղի է ունեցել դրամական միջոցների մնացորդի ավելացում: Ըստ ներկայացվածի՝ եկամուտները կազմել են 10.3 միլիարդ դրամ, նախատեսվածի նկատմամբ գերակատարվել են 9,2 տոկոսով, որը կազմում է 874 միլիոն ՀՀ դրամ:

Ըստ այդմ՝ եկամուտների 53.4 տոկոսը կազմում են ուսման վարձավճարներից մուտքերը, որոնք նախատեսվածի նկատմամբ հավաքագրվել են 100 տոկոսով: Միջին ուսման վարձի չափը

ԵՊՀ-ում, հաշվի առած զեղչերը, կազմել է 486 հազար դրամ: 2019թ. ԵՊՀ-ի կողմից վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացված զեղչերը կազմել են 388 163 000 դրամ թվով 3039 ուսանողների: Միջին հաշվարկով 1 ուսանողին հատկացված տարեկան զեղչի չափը կազմել է 128 հազար դրամ: Պետական բյուջեից ստացված ֆինանսավորումները, որոնք տրամադրվում են կրթական և գիտական ծրագրերով, կազմել են ընդհանուր եկամուտների 32.7 տոկոսը: Նախատեսվածի նկատմամբ գերակատարվել է 14 տոկոսով, որը պայմանավորված է գիտական ծրագրերով: 2019 թ. համար նախատեսված բոլոր գիտական ծրագրերն ավելացվեցին 20 տոկոս ԱԱՀ-ով (ավելացված արժեքի հարկ): Բացի դա տարեվերջին ԵՊՀ-ի և գիտության պետական կոմիտեի միջև կնքվեց լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով պայմանագիր, որի համաձայն ստացվեց 124 միլիոն դրամ ֆինանսավորում:

Ռ. Գրիգորյանի ներկայացմամբ՝ կրթական ծրագրերով պետական ֆինանսավորմամբ ավելացել է «Պատիվ ունեմ» ծրագրին մասնակից ուսանողների թիվը: Մեկ ուսանողի համար պետական նպաստը 2019 թ. կազմել է 639700 դրամ: Պետական ֆինանսավորմամբ ԵՊՀ-ում սովորում են միջին տարեկան թվով 2200 բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներ, որոնցից 148-ը՝ Իջևանի մասնաճյուղում: Հետբուհական կրթությամբ սովորում են 330 ասպիրանտներ, որոնցից 250 – ը հեռակա ուսուցմամբ:

Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները նախատեսվածի նկատմամբ գերակատարվել են 5 տոկոսով: Դրամաշնորհային ծրագրերից և բանկերից ստացվող տոկոսներից եկամուտները միասին կազմում են ընդհանուր եկամուտների 11 տոկոսը կամ 1 միլիարդ 130 միլիոն դրամ: Բանկերից ստացված տոկոսային եկամուտները ապահովել են տարեվերջյան պարզևատրման ծախսերը հոգալու համար:

Ծախսերը կազմել են 9.2 միլիարդ դրամ, այն նախատեսվածի նկատմամբ կազմել է 93.3 տոկոս: Աշխատավարձի ծախսերը կազմել են ընդհանուրի 74 տոկոսը: Դա պայմանավորված է 2019 թ. հունիս ամսին աշխատողներին վճարված 50 տոկոսի չափով պարզևատրմամբ ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ: Հաշվետու տարում բարձրացվել է ժամավճարով վարձատրվող դասախոսական կազմի 1 ժամի արժեքը: ԵՊՀ-ում միջին ամսական աշխատողների թիվը 2019 թ. կազմել է 2690 մարդ, միջին ամսական աշխատավարձը 208 600 դրամ, ներառյալ հարկերը:

Նա նշեց, որ շարունակվում է աշխատողների առողջության ապահովագրության ծրագիրը, որը արդեն երրորդ տարին է իրականացվում և նախատեսված է նաև հաջորդ տարվա նախահաշվում: Ամբողջովին կահավորվել և շահագործման է հանձնվել Ծարավ Աղբյուր փողոցի վրա գտնվող ուսանողական հանրակացարանը, որտեղ այժմ մատուցվում են կեցության ծառայություններ թվով 46 ուսանողներին, որոնցից 7-ին անվճար հիմունքներով, որպես քառօրյա պատերազմի մասնակից ուսանողներ: Շարունակվում է նաև 2016թ. ապրիլյան պատերազմում զոհված զինծառայողների երեխաներին ֆինանսական աջակցության ծրագիրը: ԵՊՀ 100-ամյակի միջոցառումների ծախսերը կազմել են 88 միլիոն դրամ:

Որոշեցին.– ԵՊՀ 2019թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) կատարողականի (հունվար-դեկտեմբեր) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.Լսեցին. – «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԵՊՀ կարծիքի և առաջարկությունների մասին: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը

ներկայացրեց, որ նախորդ նիստին որոշվեց «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԵՊՀ-ի կարծիքի ներկայացման համար իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կողմից մշակել նախագիծ: Նա նշեց, որ հանձնաժողովը կանգ չի առել առանձին հոդվածների վրա, այլ անդրադարձել է ընդհանրական բնույթի լուծումներին՝ առաջարկությունների ձևով և ուշադրություն հրավիրեց 2 հարցի վրա: Առաջին՝ բուհերի կառավարման խորհրդի, մասնավորապես՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի թվաքանակի և համամասնային ներկայացվածության հետ կապված ձևակերպումը օրենքի նախագծում չի բխում բովանդակությունից, քանի որ 1-ին կետի 2-րդ ենթակետում գրված է՝ ավելացնել տվյալ բուհի դասախոսների ու ուսանողների ներկայացուցիչների մասնակցությունը բուհի կառավարման խորհրդում 50% կամ ավելի, սակայն պետք է լինի 50%-ից ավելի, և երկրորդը, որ պետք է որոշակիացնել լիազոր մարմնի կողմից կառավարման խորհրդի կազմի հաստատման կարգավորումը: Առաջարկվում է, որ այն հաստատի կամ կառավարությունը, կամ վարչապետը, ինչպես որ դա եղել է նախկինում և բացառի լիազոր մարմնին այն ընձեռելու հնարավորությունը: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանն առաջարկեց, որ հայոց լեզու և հայոց պատմություն առարկաների՝ ոչ մասնագիտական ֆակուլտետներում պարտադիր դասավանդման հարցը նույնպես ընդգրկել կարծիքի նախագծում: Ի պատասխան Գ. Ղազինյանը նշեց, որ այդ հարցը չի ընդգրկվել այն պատճառով, որ նախ դա կհակասեր նախագծի մշակման հարցում որդեգրած ընդհանրականության մոտեցմանը, և հետո, հնարավորություն կա կարծիք ներկայացնել ֆակուլտետների կողմից ԵՊՀ-ի գիտխորհրդի կողմից տրվող կարծիքին գուգահեռ, ինչը կարող են անել բոլոր ֆակուլտետները: ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը և Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանը հետաքրքրվեցին, թե հնարավո՞ր է այս փաստաթղթում ներառել մեծ աղմուկ հանած այն իրողությունը, որ «Հայոց լեզու» և «Պատմություն» առարկաները դառնալու են ոչ պարտադիր, ինչին ի պատասխան՝ Գագիկ Ղազինյանն ասաց, որ հանձնաժողովը միակարծիք է եղել այն հարցում, որ օրենքով որոշել առանձին առարկաների պարտադիր լինելը ճիշտ չէ, և որ բուհը պետք է որոշի ոչ մասնագիտական ֆակուլտետներում այս կամ այն առարկայի պարտադիր լինելը, ինչը բխում է բուհի ինքնավարությունից և ակադեմիական ազատությունից: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանն իր անհամաձայնությունը հայտնեց հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծի այն ձևակերպմանը, որով նշվում է, թե «կարող են լինել դեպքեր, երբ թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք ավելի լավ կարողանան իրականացնել կառավարման գործառույթներ, սակայն դրանք բացառություններ են, այլ ոչ թե օրինաչափություն»՝ համարելով, որ կառավարական հմտությունները գիտական աստիճանի հետ կապ չունեն, բայց և համաձայնելով, որ բուհի ռեկտորը պետք է ունենա հնարավորինս բարձր գիտական աստիճան: Ի պատասխան՝ Գագիկ Ղազինյանը նշեց, որ կան մոդելներ, որի պայմաններում ռեկտորը հանդես է գալիս որպես մենեջեր, այլ ոչ գիտական և կրթական գործընթացների ղեկավար, համակարգող, ինչպես ավանդաբար ընդունված է մեր հանրապետությունում, մասնավորապես ԵՊՀ-ում: Նրա փաստամաբ, պետք է հաշվի առնել նաև, որ համալսարանի ռեկտորը միևնույն ժամանակ համալսարանի գիտական կամ ակադեմիական խորհրդի նախագահն է: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանն ուշադրությունը հրավիրեց ներկայացված նախագծի ձևին և կառուցվածքին՝ նշելով,

որ նախագիծը գիտխորհրդի ուժին չի համապատասխանում, չի երևում նախագծից, թե օրենքի նախագիծն ընդունելի է, թե ոչ: Վերջինս նկատեց, որ ընդհանուր եզրակացության գալու անհրաժեշտություն կա օրենքի նախագծի վերաբերյալ, քանի որ հանձնաժողովի ներկայացրած փաստաթուղթն ընթերցելիս ստացվում է, որ չպետք է ընդունել այն: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ներկայացված կարծիքի երկրորդ կետը, որը նախագծի հիմնավորվածության վերաբերյալ է, պարունակում է դրույթներ, որոնք իրականությանը չեն համապատասխանում՝ առաջարկելով հանել այդ կետը: Գ. Ղազինյանը, անդրադառնալով այդ առաջարկին, ասաց, որ այդ մասին եղել են խոսակցություններ և դժգոհություններ, սակայն առանց այդ կետի օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքը կլինի հիմնագուրկ, եթե չնշվի հիմնական բացը, որը վերաբերում է օրենքը չհիմնավորված և առանց հայեցակարգի կազմելուն: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը հիշեց, որ նախորդ քննարկման ժամանակ շատ է խոսվել կառավարման խորհրդի մասին և առաջարկ կար, որ դրա կազմում աշխատողներ և ուսանողներ չլինեն, իսկ այժմ առաջարկվում է, որ լինեն, և դեռ մի բան էլ ավելի: Գ. Գևորգյանն արձագանքեց, որ ինքը ևս համամիտ է այդ կարծիքի հետ, թե խորհրդի կազմում համալսարանականներ չպետք է լինեն: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Ա. Սադյանը անդրադարձավ կարծիքի նախագծում տեղ գտած ԳԱԱ-ի վերաբերող բաժնին, նշելով, որ դրանում չկա այնպիսի բան, ինչը որ տեղ գտած չլինի ակադեմիայի կողմից արված առաջարկությունների փաստաթղթում՝ առաջարկելով հանել այդ մասը և այն թողնել ակադեմիայի իրավասությանը: Գ. Ղազինյանը պատասխանեց, որ բուհը չի կարող չանդրադառնալ ակադեմիային, քանի որ խոսքը գնում է ոչ թե առանձին կրթության, գիտության մասին, այլ գիտության և կրթության մասին օրենքի նախագծի, ուստի թե ինչ կարգավիճակ կունենան ակադեմիային պատկանող ինստիտուտները, ինչպիսին կլինի բուհերի և ինստիտուտների համագործակցության ձևաչափը օրենքի նախագծի անորոշ ձևակերպումներից չի երևում: Գիտխորհրդի որոշ անդամներ առաջարկեցին ոչ թե միասնական կարծիք ներկայացնել, այլ դիտարկումներ և առաջարկություններ: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ հանձնաժողովի կողմից ներկայացված նախագիծը կարելի է երկու հատվածի բաժանել՝ առաջարկություններ և այդ առաջարկությունների հիմնավորումներ: Ըստ նրա՝ եթե առաջարկությունների հետ գիտխորհրդի անդամները համամիտ են, որոնք ունենալու են նորմատիվ բնույթ, ապա հիմնավորումները հետագայում խմբագրելու տեսանկյունից որևէ խնդիր չի լինի: Նա առաջարկեց հիմնական շեշտը դնել առաջարկությունների վրա, քվեարկել դրանք և կրկին վերադառնալ հիմնավորումների շուրջ անհամաձայնություններին: Գիտխորհրդի որոշ անդամներ պնդեցին, որ առաջարկություններն առանց հիմնավորման իմաստ չունեն: Գ. Գևորգյանը նկատեց, որ կարծիքի նախագծում կան չհիմնավորված դրույթներ: ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանի կարծիքով, օրենքի նախագիծն ի սկզբանե թերի էր և ոչ լիարժեք, քանի որ համապատասխան հետազոտություններ՝ սոցիոլոգիական, տնտեսական, քաղաքական, հասարակագիտական ու արժեքային, մշակութաբանական, հարցումներ չեն իրականացվել: Գ. Ղազինյանի հավաստմամբ, կատարյալ օրենք ունենալու համար դրա պատրաստման գործընթացը պետք է ենթադրի իրավիճակի ուսումնասիրություն, դրա հիման վրա հայեցակարգի մշակում, առաջարկների հիմնավորում, որից հետո պետք է լինի նպատակի ընդգծում, ռեսուրսների գնահատում և նշված նպատակին հասնելու ուղիների հստակեցում: Եվ ներկայացված կարծիքի նախագծում

անդրադարձ է կատարվել թերություններին և փորձել առաջարկություններով փոքր-ինչ բարելավել այն: Ուսանող անդամ Տ. Սողոյանը նշեց, որ գիտական խորհրդի կողմից միասնական կարծիք արտահայտելը կարևոր է, քանի որ օրենքի նախագիծը մշակող մարմինն էլ ավելի զգուշավորություն կցուցաբերի այդ կարծիքի նկատմամբ և համապատասխան հետևություններ կանի: Նրա փաստմամբ՝ կարծիքներ կարող են ունենալ նաև ֆակուլտետները, և դրանց միասնական գոյությունը ոչ մի հակասություն չի առաջացնում, ուստի կոչ արեց կողմ քվերակել ներկայացված կարծիքին: Վ. Դումանյանը կարծիք հայտնեց, որ ներկայացված փաստաթղթից չի հասկացվում, թե գիտխորհուրդը միասնական ինչ կարծիք է արտահայտում: ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյանի հավաստմամբ էլ, կան ձևակերպումներ, որոնք անընդունելի են: Դրանցից է, օրինակ, «Կրթության և գիտության ոլորտի առանձնահատկություններից մեկն այն է, որ տարիքի հետ աճում է գիտական և կրթական փորձառության մակարդակը» ձևակերպումը: Իսկ ԵՊՀ գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանի կարծիքով, փաստաթղթում բերված հիմնավորումները պետք է լինեն առավել փաստարկված: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը նույնպես առաջարկեց քվեարկության դնել միայն փաստաթղթում առկա առաջարկությունները, ապա հետո քննարկել հիմնավորումները: Արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանը նկատեց, որ ներկայացված առաջարկությունները բխում են հիմնավորումներից, իսկ դրանք առանձին ներկայացնելը ճիշտ չէ, ուստի անհրաժեշտ է օրենքի նախագծի վերաբերյալ ունենալ միասնական կարծիք: Ռեկտորի ժ/պ Գ.Գևորգյանն առաջարկեց նախ քվեարկության դնել ամբողջական նախագիծը: Քվեարկության արդյունքներով այն չընդունվեց: Այնուհետև, նրա առաջարկով քվեարկության դրվեց հարց, որով նախատեսվում էր այլևս չանդրադառնալ այս հարցին, ինչը նույնպես չընդունվեց: Առաջարկ հնչեց նաև ներկայացված կարծիքը վերադարձնել հանձնաժողովին: Գ. Ղազինյանը պնդեց, որ դեկտեմբերի 19-ին գիտխորհուրդը հաստատել էր միասնական կարծիք արտահայտելու որոշումը, ինչը կամ պետք է քվեարկությամբ այսօր չեղարկել, կամ պայմաններ ստեղծել՝ նոր նախագիծ ներկայացնելու: Ի պատասխան՝ Գ. Գևորգյանը պնդեց, որ ինչպես փորձը ցույց տվեց, միասնական կարծիք ընդունելն անհնար է: Գ. Ղազինյան բարձրաձայնեց, որ եթե գիտխորհուրդը չի ցանկանում միասնական կարծիք արտահայտել, թող քվեարկի, եթե ոչ, թող ձևավորվի նոր հանձնաժողով: Նա նշեց, որ անձամբ ինքը հրաժարվում է հետագայում աշխատել այս նախագծի շուրջ, բայց ձևավորված հանձնաժողովի մյուս անդամների հետ մեծահոգաբար պատրաստ է հնարավորություն տալ նոր հանձնաժողովի անդամներին օգտվելու այսօր ներկայացված նախագծից: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը քվեարկության արդյունքների հիման վրա օրակարգի այդ հարցը համարեց փակված:

6.Լսեցին. - Ֆինանսական վերլուծությունների վարչության կանոնադրության հաստատման մասին: Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչ. պետ Ա. Թադևոսյանը նշեց, որ կանոնադրության նախագիծը անցել է փորձաքննություն իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովում, ստացել դրական եզրակացություն:

Որոշեցին.- Հաստատել ԵՊՀ ֆինանսական վերլուծությունների վարչության կանոնադրությունը:

7. Լսեցին. -Պետության կողմից տրամադրվող ԵՊՀ բազային ֆինանսավորման հայտերի երաշխավորության մասին: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը հայտնեց, որ ընթացիկ տարվա հունվար ամսվա կեսերին եղել է 2021թ. բազային ֆինանսավորման հայտերի ներկայացման առաջարկ , որն արդեն ուշացած էր, քանի որ սովորաբար լինում էր դեկտեմբեր ամսվա ընթացքում: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ գիտական և գիտատեխնիկական ենթակառուցվածքների պահպանում և զարգացում հողվածի շրջանակում ներկայացվել է 33 հայտ: Առկա է նաև նպատակային մեկ ծրագիր և ևս 3 նոր ծրագրեր:

Որոշեցին.- Երաշխավորել ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության ԵՊՀ բազային ֆինանսավորման 2021թ. հայտերը:

8. Լսեցին. - 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին հարցը: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը հաղորդեց, որ անվանական կրթաթոշակի 54 տեղի համար ներկայացվել է 57 թեկնածու: Բացառությամբ 1 դեպքի՝ բոլոր ներկայացված թեկնածուները համապատասխանում են կարգի պահանջներին: «Յ. Ղամբարյանի անվան կրթաթոշակի» հավակնորդը չի ապահովել կարգով սահմանված վերջին չորս կիսամյակ գերազանց առաջադիմության պահանջը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ այդ անվանական կրթաթոշակը տրվում է մասնավոր կազմակերպության կողմից, և կա պայմանավորվածություն այդ ուսանողին տրամադրելու, բացի այդ հավակնորդը ֆակուլտետի լավագույն ուսանողներից է, ով միայն մեկ կիսամյակ ունեցել է 17.67 ՄՈԳ: Ուստի, Գ. Ղազինյանը միջնորդեց գիտական խորհրդին բացառության կարգով հաստատել այդ հավակնորդի թեկնածությունը: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ տվյալ հավակնորդի ՄՈԳ-ը ընդամենը 0.33 միավորով է ցածր սահմանված նորմից: Հ. Ժամհարյանը նկատեց, որ նախկինում նմանատիպ դեպքերի ժամանակ, երբ մասնավոր անձանց կամ կազմակերպությունների կողմից առաջարկվող կրթաթոշակները, որոնք չէին համապատասխանում համալսարանական կարգերին, հանվում էին ցուցակից և առանձին ընթացակարգով էին հատկացվում: Ինֆորմատիկայի և կիրառական ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը առաջարկեց նման դեպքերի հետ կապված վերանայել համապատասխան կարգը, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը կոչ արեց գրավոր առաջարկներ ներկայացնել այդ կապակցությամբ:

Որոշեցին.- Հաստատել 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

9. Լսեցին. - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին: Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյանը հաղորդեց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի մասին՝ ևս մեկ անգամ կոչ անելով հորդորել դասախոսներին մասնակցելու կազմակերպվող դասընթացներին և ծանոթանալու նորարարական մեթոդներին:

Որոշեցին.- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2018-2019 ուստարի) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

10. Լսեցին.- ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի Գ. Անանյանի անվան մուլտիմեդիա լաբորատորիայի վերակազմավորման մասին: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը հայտնեց, որ դեռևս 2001թ. ֆակուլտետում ստեղծվել էր մեդիա կենտրոն, որը անվանակոչվեց մուլտիմեդիա լաբորատորիա, որն այսօր վերակազմավորելու անհրաժեշտություն ունի՝ առաջարկելով այն վերակազմավորել Գառնիկ Անանյանի անվան ինովացիոն մեդիակենտրոնի:

Որոշեցին.- Առաջարկել Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի Գառնիկ Անանյանի անվան մուլտիմեդիա լաբորատորիան վերակազմավորել, և այն վերանվանել Գառնիկ Անանյանի անվան ինովացիոն մեդիակենտրոն:

11. Լսեցին. -Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ առաջարկվում է հանձնաժողովի կազմում ռեկտորի աշխատակազմի ղեկավար Արարատ Մալխասյանի փոխարեն ընդգրկել ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Արման Մալխասյանին:

Որոշեցին.- ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովի կազմից հանել Արարատ Մալխասյանին և կազմում հաստատել Արման Մալխասյանին:

12. Լսեցին. - ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի սրահը «Հարություն Շմավոնյան սրահ» անվանակոչելու մասին: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը նշեց, որ ֆակուլտետում մինչև օրս չկա հայերեն առաջին տպագիր պարբերականի հիմնադիր Հ. Շմավոնյանի անվամբ լսարան կամ սրահ, ուստի առաջարկեց մամուլի սրահն անվանակոչել հայ երախտավորի անունով:

Որոշեցին.- ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի սրահն անվանակոչել «Հարություն Շմավոնյան սրահ» անունով:

13. Լսեցին. - ԵՊՀ արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանի «Իսլամագիտություն» աշխատանքի առաջին հատորը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը նշեց, որ ֆակուլտետում տասնամյակներ շարունակ դասավնդվում է իսլամագիտություն, սակայն մինչև օրս հայերենով դասագիրք չկա, և Քուվեյթի հիմնադրամներից մեկից ստացված գրանտային ծրագրի շրջանակում իրականացված և ներկայացված աշխատանքը կոչված է այդ բացը լրացնելուն:

Որոշեցին.- ԵՊՀ արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանի «Իսլամագիտություն» աշխատանքի առաջին հատորը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

14. Լսեցին.- «Հայաստանի Հանրապետության Էկոլոգիական իրավունք» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.թ., պրոֆեսոր Ա. Իսկոյան, ի.գ.թ. Օ. Գեղամյան, ի.գ.թ. Հ. Գրիգորյան) որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ ներկայացված աշխատանքը շատ սպասված և ուսանողների կողմից մեծ պահանջարկ ունի, ուստի առաջարկեց այդ աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Որոշեցին.- Միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին «Հայաստանի Հանրապետության Էկոլոգիական իրավունք» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.թ., պրոֆեսոր Ա. Իսկոյան, ի.գ.թ. Օ. Գեղամյան, ի.գ.թ. Հ. Գրիգորյան) որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում:

15. Լսեցին. - «Եվրասիական ինտեգրում. գաղափարներ, խնդիրներ, գործընթաց և հեռանկարներ» ռուսերեն աշխատանքի 2-րդ լրամշակված տարբերակը (համահեղ. Վ. Լեպեխին, Ա.Սաֆարյան, Ս. Բելյակով, Վ. Բելսկի, Ա. Թավադյան) որպես ուսումնական ձեռնարկ հրատարակության երաշխավորելու մասին:

Որոշեցին.- «Եվրասիական ինտեգրում. գաղափարներ, խնդիրներ, գործընթաց և հեռանկարներ» ռուսերեն աշխատանքի 2-րդ լրամշակված տարբերակը երաշխավորել հրատարակության որպես ուսումնական ձեռնարկ:

Օրակարգային հարցերը սպառելուց հետո կրկին անդրադարձ եղավ օրենքի նախագծի քննարկմանը: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, ստեղծել դրա մշակման համար աշխատանքային խումբ և հաջորդ ուրբաթ հրավիրել գիտական խորհրդի նիստ: Հարցը դրվեց քվեարկության և ձայների մեծամասնությամբ հաստատվեց: Որոշվեց հաջորդ ուրբաթ հրավիրել գիտխորհրդի նիստ՝ քննարկելու օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու առաջարկությունները: Կազմվեց նոր հանձնաժողով, որի կազմում են Գեղամ Գևորգյանը, Ռուբեն Մելքոնյանը, Վահե Հովհաննիսյանը և Արմեն Թադևոսյանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ.Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

21.02.2020թ.